ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 89/09

Քաղ. Երեւան **22 դեկտեմբեր 2009թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2009թ. դեկտեմբերի 22-ի նիստում (արձանագրություն N75/7) քննարկեց Biedriba «RIGAS ŠPROTES» Общество "РИЖСКИЕ ШПРОТЫ" (այսուհետ՝ նաեւ Բիեդրիբա «ՌԻԳԱՍ ՇՊՐՈՏԵՍ» Օբշչեստվո «Ռիժսկիե Շպրոտի») լատվիական ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ.Մանուկյանի 2009թ. հուլիսի 23-ի բողոքն ընդդեմ «Արմեն-Համիկ եղբայրներ» ՍՊԸ ընկերության անունով «РИЖСКИЕ КРУПНЫЕ ШПРОТЫ В МАСЛЕ ՌԻԳԱՅԻ ԽՈՇՈՐ ՇՊՐՈՏՆԵՐ ՅՈՒՂԻ ՄԵՋ KING ORIGINAL» ՀՀ վկ.№13058 ապրանքային նշանի գրանցման։

Ստորեւ նշվում են բողոքարկողի փաստարկները։

Բողոքարկողը համարում է, որ «РИЖСКИЕ КРУПНЫЕ ШПРОТЫ В МАСЛЕ ՌԻԳԱՅԻ ԽՈՇՈՐ ՇՊՐՈՏՆԵՐ ՅՈՒՂԻ ՄԵՋ KING ORIGINAL» (ՀՀ վկ.№13058) ապրանքային նշանի գրանցումը կատարվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» եւ «բ» ենթակետերի խախտմամբ, քանի որ օրենքով սահմանված է, որ.

«3. Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել նաեւ այն նշանները, որոնք հանդիսանում կամ պարունակում են՝

ա) կեղծ կամ սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ապրանքի կամ արտադրողի մասին.

բ) աշխարհագրական նշում եւ գրանցման են ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշմամբ տեղանքից, եթե այդ աշխարհագրական նշման

օգտագործումը մոլորության մեջ է գցում սպառողին ապրանքների իրական ծագման վայրի հարցում»։

Բողոքարկողը նշում է նաեւ, որ Բիեդրիբա «ՌԻԳԱՍ ՇՊՐՈՏԵՍ» Օբշչեստվո «Ռիժսկիե Շպրոտի») լատվիական ընկերությունը ներկայացրել է ընկերության անդամ հանդիսացող եւ կոլեկտիվ ապրանքային նշանի օգտագործման իրավունքն ունեցող իրավաբանական անձանց ցուցակը, որոնց թվում, սակայն չի նշված «Արմեն-Համիկ եղբայրներ» ՍՊԸ-ն։ Նրա կարծիքով կան նաեւ մի շարք հարցեր, որոնք վիճարկվող ապրանքային նշանի սեփականտիրոջ կողմից պարզաբանման կարիք ունեն։

Բողոքարկողը ակնհայտ է համարում այն փաստը, որ «РИЖСКИЕ КРУПНЫЕ ШПРОТЫ В МАСЛЕ ՌԻԳԱՅԻ ԽՈՇՈՐ ՇՊՐՈՏՆԵՐ ՅՈՒՂԻ ՄԵՋ KING ORIGINAL» ապրանքային նշանը մոլորության մեջ է գցում սպառողին ինչպես ապրանքի, այնպես էլ արտադրողի հարցում եւ ելնելով դրանից խնդրում է անվավեր ճանաչել №13058 ապրանքային նշանի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում։

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 36-րդ կետի համաձայն 30.09.09թ. ծանուցել է «РИЖСКИЕ КРУПНЫЕ ШПРОТЫ В МАСЛЕ ՌԻԳԱՅԻ ԽՈՇՈՐ ՇՊՐՈՏՆԵՐ ՅՈՒՂԻ ՄԵՋ KING ORIGINAL» (ՀՀ վկ.№13058) ապրանքային նշանի սեփականատեր «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ին (ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն) բողոքարկման խորհրդի կողմից 2009թ. հուլիսի 23-ին Բիեդրիբա «ՌԻԳԱՍ ՇՊՐՈՏԵՍ» Օբշչեստվո «Ռիժսկիե Շպրոտի» ընկերության կողմից ներկայացված բողոքը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի՝ 2009թ. սեպտեմբերի 15-ի, եւ բողոքի վերաբերյալ իր նկատառումները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու մասին։

Ներկայացված նյութերի քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը նպատակահարմար է գտել մի քանի անգամ հետաձգել բողոքի քննարկումը՝ կողմերին հնարավորություն ընձեռելով լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու եւ համաձայնության գալու համար։

Բողոքարկման խորհրդի նիստում, քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը համաձայնվեց բողոքարկողի այն փաստարկների հետ, որ «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ընկերությանը պատկանող «РИЖСКИЕ КРУПНЫЕ ШПРОТЫ В

MACЛE ՌԻԳԱՅԻ ԽՈՇՈՐ ՇՊՐՈՏՆԵՐ ՅՈՒՂԻ ՄԵՋ KING ORIGINAL» (ՀՀ վկ.№13058) որը պարունակում է սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություն ապրանքի կամ արտադրողի հարցում, մատնանշելով ապրանքի ծագման վայրը, հետեւաբար, (ՀՀ վկ.№13058) ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելը կատարվել է «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաեւ օրենք) 11-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետի խախտմամբ եւ գտնում է, որ «РИЖСКИЕ КРУПНЫЕ ШПРОТЫ В MACЛE ՌԻԳԱՅԻ ԽՈՇՈՐ ՇՊՐՈՏՆԵՐ ՅՈՒՂԻ ՄԵՋ KING ORIGINAL» ընկերությանը պատկանող (ՀՀ վկ.№13058) ապրանքային նշանի գրանցումը ենթակա է անվավեր ճանաչման:

Ելնելով դրանից եւ ղեկավարվելով օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետերով, ինչպես նաեւ «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 74-րդ կետի 1-ին ենթակետով Բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել Զ. Մանուկյանի 2009թ. հուլիսի 7-ի բողոքը ամբողջովին եւ «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ընկերությանը պատկանող (ՀՀ վկ.№13058) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան